



ԱՐԱ ՄԱՐԿՈՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ

1. ԴԱՍԱԿԱՆ ԹԻՎԵՐ ԶՈՒՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐ ԺԳ ԴԱՌՈՒ
ՐՈՒՂԱՐԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԻ ՄԸ ՄԵՋ

Ռուս հայտնի սլավոնագետ Վ. Գրիգորովի 1844-ին Սուրբ Լեոան Զոգրաֆի վանքին մեջ (Ներկայիս Հունաստանի հայկիդինյան թեոլոգի) երևան հանած է թուղարական Տոնացույց մը։ Սույն արժեքավոր ձեռագիրը հետագային ուրիշ ռուս սլավոնագետներու ալ ուշադրութիւնը գրաված է, որոնք հրատարակած են անոր զանազան մասերը¹։ Թուղարական պատմագիտական գրականութիւն մեջ հիշյալ Տոնացույցով առաջին անգամ զբաղած է Իորդան Իվանով²։ Հարգելի գիտնականը, քննելով ձեռագրի ուղղագրութիւնը, զայն կհամարե միջին թուղարերեն ու կհրակացնէ, որ գրված ըլլալու է ժԳ դարու երկրորդ կիսուն³։

Տոնացույցը գրված է գեղեցիկ ձեռագրով, ծուրաքանչյուր ամիս կսկսի գունավոր զարդազրով։ Կրակական 219 մագաղաթի թերթերն են բաժնված է 8 թերթի (16 էջ) բաղկացած պրակներու։ Ձեռագրին մեզի համար ունեցած նշանակութիւնը այն է, որ յուրաքանչյուր պրակի վերջին թերթերը նշանակված են հայկական տառերով, որոնք թվով 23 են (տե՛ս նկարը)։

Հայկական յուրաքանչյուր տառի վերևը և ներքեւը գիծ դրված է։ Տառերը ունին փոքր

տպագիր տառի ձև և գրված են մեծ վարպետութեամբ, ինչ որ կվկայէ, թէ ելած են վարպետ գրչի ձեռքէն։ 17-րդ պրակին վրա հայկական տառի փոխարեն կտեսնվի սլավական ռՅԼ տառը, իսկ 18-րդ պրակին վրա տառ չկա։ Միևնույն ժամանակ ռՃ տառին հաջորդող երեք պրակներ տառերով թվահամարված չեն։ Անոնց կհաջորդէ ռՈ տառով նշված պրակը։ Վերջին պրակը կավարտի ռՍ տառով։

Ծ Ը Գ Դ Ե Ն Է Ը Թ Ժ
 Ի Լ Խ Կ Կ Զ Է (31) Ճ ...
 Ծ Ը Գ Դ Ե Ն

Հիշված Տոնացույցի մեջ սույն հայկական տառերը թվական նշանակութիւն չունեն, որովհետեւ, եթէ այդպէս եղած ըլլար, «Ժ» տառով նշանակված 10-րդ պրակին պետք է հետեւէր «ԺԱ» և հաջորդաբար, մինչդեռ «Ժ»-ին կհետեւի հայկական այբուբենի հաջորդ տառը՝ «Թ», որ համազոր է 20-ի։ Այնուհետև կհաջորդեն «Լ», «Խ», «Ը», «Կ», «Զ» տառերը, որոնք համազոր են 30, 40, 50, 60 և 70 թվանշաններուն։ Ակնհայտ է, որ սույն տառերը այստեղ գրված են որպէս դասակարգ ցույց տվող նշաններ՝ առաջին պրակ, երկրորդ պրակ, երրորդ պրակ և այլն։ 17-րդ և 18-րդ պրակներին հետո պակասած տառերը հավանաբար ջնջված են, ձեռագրի անխնամ պահպանման պատճառով։ Հավանաբար 17-րդ պրակին հետո գրված սլավական ռՅԼ

¹ Ի. Ստրեզենսկի, ռՅԼ սլավական հուշարձան ըստ Ցուտոֆովի նամակի, 1888 թ., հատ. I, էջ 120—123 և հատ. II, էջ 344—347։—Նոնկո, «Սլավոն-սերբական ժամանակագրութիւնը ըստ Աֆոնյան առապատիչ, Մոսկվա, 1875 թ., էջ 84 և շար.։—Գրեֆիթի Ուալենսկի, «Երկրորդ ճանապարհորդութիւն», Մոսկվա, 1880 թ.։—Ա. Իվ. Ալեքսեևիչով, «Ռուսական քանադորական հանգստ», հատ. XXIX, 1888։

² Իորդան Իվանով, «Թուղարական հնութիւններ Մակեդոնիո մեջ», Սոֆիա, 1908, էջ 38 և շար.։

³ Նույն տեղը, էջ 39։

տառը զետեղված է անծանոթի մը կողմէն, հայկական տառի ընդունին հետո:

ԺԳ դարու բուլղարական ձեռագրի մը մէջ հայկական տառերու գոյութիւնը հետաքրքրական պարագա է: Ինչպէ՞ս բացատրել այս:

Պրոֆ. Ի. Իվանով կենթադրեմ, որ սույն մագաղաթները հայկականաբար վաճառված են հայ գրավաճառներու կողմէն: Մենք անընդունելի կզտենեմք այս ենթադրութիւնը, որովհետեւ անիմաստ և անհարկի է մագաղաթի պարագայ թերթերը թվագրել, այն ալ վաճառականի մը կողմէն, քանի որ անկարելի էր նախապէս գիտնալ, թե ի՞նչ քանի պիտի ծառային թվագրված էջերը:

Խնդիրը կարելի է բացատրել այլապէս: Սուրբ Լեւոն, ինչպէս անցյալին, նույնպէս մինչև վերջերս կեդրոնն է քաղմաթիւ վանքերու, որոնց մէջ գրական եռանդուն գործունեություն տեղի ունեցած է: Այս վանքե-

րուն մէջ կծառային հույն, բուլղար, սերբ, ռուս, ռումին և հայկականաբար միջին դարերուն նաև հայ վանականներ:

Խնդրո առարկա Տոնացույցը հայտնի է Դրաքանի Տոնացույց անվան տակ (գրիչ Դրաքանի անվամբ): Հիշյալը հայտնապէս բուլղար է, որ բուլղարներեն զատ կտիրապետե նաև հունարենի, ինչ որ հայտնի է քնագրին մէջ զետեղված հունական տառերու գործածութենէն: Կասկած չգուրս է, որ ձեռագիրը գրված է Սուրբ Լեւոն բուլղարական վանքերէն մեկուն և հայկականաբար Զոգրաֆի վանքին մէջ:

Նկատի ունենալով թվագրված պարագաները, կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ մագաղաթյա թերթերը ստացված կամ գնված են հայ միաբանէ մը, որ անոնց վրա որեւէ նշան մը գրի առնելու համար նախապէս թվագրած է զանոնք հայկական տառերով, որպէսզի էջերը իրարու հետ չմիջփոխին:

2. ԱՆՀԵՏԱՑԱՍԵ շԱՅ ԳԱՂՈՒԹ ՄԸ ԲՈՒՂԱՐԻՈՒ ՌԱԶԳՐԱՒ ԲԱՆԱԳԻՆ ՄԵՋ

1878-ին թրքական լուծեն Բուլղարիո ազատագրութեան պահուն Ռազգրադի մէջ հայեր լկային: Սակայն թրքական պաշտոնական փաստաթղթերու մէջ կհիշվին քաղաքին մէջ «Ermeni sokak» (սլաւկական փողոց) և քաղաքին շուրջ «Ermeni baalara» (սլաւկական այգիները), «Ermeni mezarlika» (սլաւկական գերեզմանատուն) և բուլղարական սլաւոնա թաղամասի կեդրոնին մէջ «Ermeni mahlesia» (սլաւկական թաղ): Կհիշվի նաև գոյութիւնը հին հայկական եկեղեցիի մը Ս. Աստուածածին անունով:

Այս բոլորը կուգան հաստատել, թե Ռազգրադի մէջ գոյութիւն ունէր հայկական մեծ գաղութ մը, որ ունէր իր առանձին թաղամասը և եկեղեցիներ: Սակայն 1878-ին հետո Ռազգրադի մէջ հայեր լկային այլևս:

Հետաքրքրական է գիտնալ, թե հայերը ուրկէ՞ եկած են Ռազգրադ, ի՞նչ էր անոնց գրադումը և ի՞նչ պատճառներով հեռացած են անկէ:

Ռազգրադի հայերու մասին առաջին անգամ տեղեկութիւն կուտա կաթոլիկ միսիոներ Պետր Բոգդան Պակչիչ, որ 1640 սկստեմբեր 11-ին Ռազգրադ այցելած է: Ան ի մեջի այլոց կէտէ, թե սկրանգրադ (Ռազգրադ— Ա. Մ.) քաղաքին մէջ կան 70 հայ ընտանիքներ, թվով ալելի քան 460 հոգի, որոնք նույնպէս

եկեղեցի լուծին, բոլորն ալ արհեստավոր և ատաղձագործ են, այսինքն հլուան»: 125 տարի հետո, 1765-ին, Ռազգրադ կայցելե դանիացի ճանապարհորդ Կարստեն Նիբուր, որ կնշէ, թե քաղաքին մէջ բացի թուրքերէն, բուլղարներն և հույներն, կան նաև 50—60 հայեր:

Ռազգրադի հայութեան անցյալի մասին կիսոսին նույնպէս հայ աղբյուրներու Այսպէս, Կաֆայի մէջ Աղարիա Զուղայեցիի ձեռամբ գրված մագաղաթյա Ավետարանի մը մեկ հիշատակարանն կպարզվի, թե նույն ձեռագիրը նվիրված է Վերգլատու (Ռազգրադ— Ա. Մ.) ժամու Ս. Աստուածածինի ի յիշատակ, ՌՃԷ (1107—1658) թվականին: Ավելի ուշ, ըստ Հ. Մ. Բժշկյանի վկայութեան, իր այցելութեան ընթացքին, 1802 թվականին, Ռազգրադի մէջ գտնված է 20 տուննոց հայութիւն մը, բաղկացած առետրականներէ: Համայնքը ունէր նաև իր փոքրիկ եկեղեցիներ:

Ասոնք են Ռազգրադի հայկական գաղութի վերաբերյալ գրավոր պատմական փաստերը:

« Պետր Բոգդան, «Ճանապարհորդութիւն Բուլղարիո մէջ» 1640-ին», «Քնականայրերու ուսումնասիրութեան արխիւ» պարբերաթերթ, Բ տարի, Բ գիրք, 1939—1940, էջ 185:

7 Կարտեն Նիքսո, «Ճանապարհորդութիւն Կաստանդնուպոլիս Բուլղարիո մէջ» ԺԸ դարուն», Պարբերաթերթ, 69-րդ գիրք, 1900, էջ 289:

8 Ն. Գոտտովան, «Բուլղարահայ անհետացած գաղութներու մասին», Երևան, 1959:

9 Նույն աղբյուր:

4 Պրոֆ. Ի. Իվանով, «Բուլղարական հնութիւններ Մակեդոնիո մէջ», Բ հավելյալ տպագրութիւն, Սոֆիա, 1931, էջ 488:

5 Ա. Եսէյ. Բուլղարի. «Ռազգրադ». 1930, էջ 112—113:

Ուրիշ որևէ առարկայական փաստ չէ մնացած, բացի տապանաքարի մը, որ ներկայիս կ'ապահանջվի Ռազդրադի հնագիտական թանգարանին մեջ:

Տապանաքարը պատահամա՞ր երևան հանված է 1932 թվականին Ռազդրադի մեջ հին տան մը քանդումի պահուն, որ թրքական տիրապետության շրջանին կժառայե՞ր որայես վառողի (բորակի) աշխատանոց: Շեմքին հատակը ծածկված էր քարե սալերով և դանոնք հանելու ժամանակ հայտնի կըլլա, որ տապանաքարեր են, որոնց միջև կգտնվին ևս հայերեն արձանագրության մը տապանաքար մը (տե՛ս նկարը):

Տապանաքարը տաշված է սովորական կրաքարի և ունի 1,20 մետր երկարություն, 0,40 մետր լայնություն և 0,19 մետր թանձրություն: 1714 թվակիր արձանագրությունը կգտնվի տապանաքարի վերի ծայրը և ունի հետևյալ բովանդակությունը.

ԱՅՍ Է ՏՊՆ ՊԱ-

ՊԱՆՆԻ ՈՐԴԻ


ՅՈՂԱՆԻՆ ԹՎ

ՌՃԿԳ

«Որդի» բառին Ո և Ր տառերը միահյուսված, կապգիր են: Տապանաքարին թվականը լավ պահպանված է: Պապախան անունը անշուշտ պարսկահայկական է: Ասկե կրնանք եզրակացնել, որ Ռազդրադի հայերը պարսկահայեր էին և եկած էին Արեւելյան Հա-

յաստանէն ժէ դարու առաջին կիսուն, Շահ Աբասի մեծ ռոնագաղթերու ժամանակ:

Հայերը Ռազդրադեն զաղթած են շատ հավանաբար 1806—1812-ի ռուսեթրքական



պատերազմին ժամանակ, ավելի ճիշտ 1811-ին, երբ ռուսերը կհեռանան քաղաքեն ու թուրքերը զայն կհրդեհեն: Նկատի ունենալով, որ զաղթողները հեռացած են դեպի Հյուսիս, պետք է եզրակացնել, որ Ռազդրադի հայերը վերաբնակած են Ռուսե (Ռուսջուք) քաղաքը, որտեղ կար մեծ հայ գաղութ, և Հարավային Ռուսիո այլ քաղաքները:

